ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ ԳՈՒՄԱՐՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ «ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆԻ ԵՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՂԻՆԱԿԱԾ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ԵՐԿՈՒ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով և 7-րդ մասի 2-րդ կետով «Իմ քայլը» խմբակցությունը որոշում է.

Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

2020թ-ի մայիսի 26-ին գումարվող հերթական նիստերի ավարտից անմիջապես հետո՝ Ազգային ժողովի ---- պատգամավորների նախաձեռնությամբ, սահմանված օրակարգով՝ «Իմ Քայլը» խմբակցության պատգամավոր Նարեկ Զեյնալյանի կողմից շրջանառության մեջ դրված «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Պ-621-18.05.2020-ԱՍ-011/0) եւ պատգամավորներ Աննա Կարապետյանի և Վլադիմիր Վարդանյանի կողմից շրջանառության մեջ դրված «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Պ-627-23.05.2020-ՊԻ-011/0) օրենքի նախագծերը երկու ընթերցմամբ քննարկելու մասին:

Հիմնավորում

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունումը բխում է նոր կորոնավիրուսով պայմանավորված մեկուսացված եւ ինքնամեկուսացված աշխատող քաղաքացիների սոցիալական պաշտպանվածության աստիճանը, լրացնել նոր իրավիճակով պայմանավորված օրենսդրական բացը:

Նոր կորոնավիրուսի համավարակին դիմագրավելու ընդունված ռազմավարությունները նախատեսում են, քաղաքացիների մեկուսացում և ինքնամեկուսացում, որի արդյունքում կտրվում են համաճարակաբանական շղթաները, նպաստելով վարակի տարածման արագության կրճատմանը: Միևնույն ժամանակ, կարգավորված չէ մեկուսացված և ինքնամեկուսացված աշխատող անձանց անաշխատունակության նպաստի տրամադրման գործընթացը, որը կարող է առաջացնել քաղաքացիների կողմից մեկուսանալուց կամ ինքնամեկուսանալուց խուսափելու ցանկություն, պայմանավորված եկամուտի աղբյուրի կորստի վտանգով:

Օրենսդրական կարգավորումը նպատակ ունի, ինչպես էապես բարձրացնել աշխատող քաղաքացիների սոցիալական պաշտպանությունը, նպաստել աշխատաշուկայում ստվերի կրճատմանը, այնպես էլ աջակցել հակահամաճարակային միջոցառումներին: Պայմանավորված նոր կորոնավիրուսի պայմաններում բնակչության սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ նման կարգավորումներ ներդրվել են նաև եվրոպական մի շարք երկրներում:

Օրենքի նախագծի ընդունման արդյունքում մեկուսացած և ինքնամեկուսացած աշխատող քաղաքացիների համար կավելանա ժամանակավոր անաշխատունակության հիմքով նպաստի նշանակման հասանելիությունը:

ՀՀ ԱԺ արտահերթ նիստ գումարելու անհրաժեշտությունը պայմանավորված է կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական հետևանքների արագ արձագանքմանը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 21-ի ՀՕ-46-Ն սահմանադրական օրենքով նախատեսվում է Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունից անցում՝ քաղաքացիական ծառայության, որը պետք է իրականացվի Ազգային ժողովի աշխատակազմում կառավարչական իրավահարաբերությունների, քաղաքացիական ծառայության, ինչպես նաեւ Ազգային ժողովի աշխատակազմի կազմակերպման եւ գործունեության այլ առանձնահատկությունները սահմանող օրենքին համապատասխան՝ 2020 թվականի հուլիսի 31-ից հետո: Հաշվի առնելով, որ այդ օրենքի նախագիծը դեռեւս Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված չէ, իսկ առանց դրա ընդունման հնարավոր չէ պատշաճ կարգով կազմակերպել նախատեսվող անցումը՝ անհրաժեշտություն է առաջացել փոխելու օրենքով սահմանված ժամկետները:

Սույն օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունից՝ քաղաքացիական ծառայության անցմանն առնչվող դրույթներն ուժի մեջ մտնելու, Ազգային ժողովի աշխատակազմում կառավարչական իրավահարաբերությունների, քաղաքացիական ծառայության, ինչպես նաեւ Ազգային ժողովի աշխատակազմի կազմակերպման եւ գործունեության այլ առանձնահատկությունները սահմանող օրենքի ընդունման ժամկետները երկարաձգել մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 30-ը:

Օրենքի նախագծի ընդունմամբ կապահովվի Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունից՝ քաղաքացիական ծառայության անցման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների ընդունման համար բավարար ժամկետի սահմանումը:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՄԱԿՈՒՆՑ**